Ա.Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» գրքի մասին

Արարատ Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում»* ուսումնասիրությունը պատկանում է այն գործերի շարքին, որոնց կարելի է բնութագրել կապիտալ, ֆունդամենտալ և այդ կարգի այլ մակդիրներով և, իհարկե, ոչ թե պարզապես գրքի ծավալից ելնելով, թեև այդ իմաստով էլ նա պատկառելի չափ ունի, այլ նրա բովանդակությունից՝ բազմաբնույթ և ընդարձակ: Հետազոտության արժանիքները մեծաքիվ են. նրանցից ես կցանկանայի նշել մի քանի կարևորներ:

Նախ՝ ապշեցուցիչ տպավորություն է թողնում հեղինակի կողմից միայնակ հսկայական ծավալի նյութի յուրացման և ստեղծագործորեն վերարտադրման ուղղությամբ կատարած բուն իմաստով տիտանական բնույթի աշխատանքը: Այդ արժանվույն գնահատելու համար բավական է ծանոթանալ գրքի վերջում ներկայացված հայ նկարիչների և քանդակագործների անվանացանկի հետ, որն, եթե չեմ սխալվում, այդպիսի լայն ընդգրկումով հայ արվեստաբանությունում տրվում է առաջին անգամ:

Գրեթե սպառիչ ձևով ներկայացնելով երկու հարյուրամյակի ընթացքում ստեղծված գեղարվեստի գործերը, հեղինակը հնարավոր է գտնում ծավալուն կամ հակիրճ ձևով տալ բոլոր հիշատակվող հայ արվեստագետների ստեղծագործության բնութագիրն ու վերլուծությունը: Նմանապես տպավորիչ է օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը, որն ամփոփում է նյութեր հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով, ընդգծում եմ՝ օգտագործված, այլ ոչ թե ուղղակի բուն թվարկված:

Այս կապակցությամբ ուզում եմ նշել, որ Ա.Աղասյանի աշխատությունը ոչ միայն հարուստ նյութ է պարունակում հայ կերպարվեստի ու քանդակագործության, այլ նաև հայ արվեստաբանության ականավոր գործիչների և արվեստաբանութ-

---

* Արարատ Աղասյան, «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում», Ե., «Ոսկան Երևանցի», 2009, 292 էջ

յան զարգացման մասին: Հարուստ և բովանդակալից են ծանոթագրությունները:

Եվ վերջապես, որն ամենակարևորն է, դա գրքի տեսական-վերլուծական կողմն է: Հեղինակը վերլուծել և բնութագրել է հայ կերպարվեստի զարգացումը մի կողմից՝ ըստ դարաշրջանների, մյուս կողմից՝ ըստ ժանրերի՝ տալով նրա պատմության ամբողջական համայնապատկերը: Մեր առջև մի աշխատություն է, որը արտահայտում է հեղինակի սեփական կարծիքը իր կողմից ուշի-ուշով ուսումնասիրված հայ արվեստի երկու դարի պատմության մասին և որը հիմնականում համոզեցուցիչ է, թեև առանձին արվեստաբաններ կարող են ունենալ և այլ կարծիքներ այս կամ այն գեղարվեստական երևույթի մասին: Մնում է սրտանց շնորհավորել հեղինակին այդ հաղթանակի կապակցությամբ և ցանկանալ նորանոր գիտական սխրանքներ: